

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/2

5 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Զ Արքենիկ Մարգարյանի 19.09.2012թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 14.09.2012թ. թիվ 2118448 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 04.09.2012թ. թիվ 2118448 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Զ Արքենիկ Մարգարյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.06.2006թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 14.09.2012թ-ին կազմվել է թիվ 2118448 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Զ Արքենիկ Մարգարյանը ք.Էջմիածնի ԳԿՏ-ի տարածքում գրաղվում է հյուրանոցային տնտեսության կազմակերպմամբ: Ա.թ. մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար Էջմիածնի ՏՀՏ է ներկայացրել տեղեկություններ հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ, սակայն հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցված չի եղել Էջմիածնի ՏՀՏ-ում:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խափստվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին <<սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Զ Արքենիկ Մարգարյանի գանգատում մասնավորապես նշված է.

2012թ. մարտի 1-ին համապատասխան օրենքի սահմաններում դիմում եմ ներկայացրել ՏՀՏ Վաղարշապատի բաժանմունքի 4-րդ սենյակ, հանձնել եմ Մարդամ անունով մի աղջկա, իսկ <ԴՄ ապարատը դիմումի հետ միասին, նրա կողմից աշխատակցին: Նոյն օրն ինձ տվել են իմ Ա/Զ-ի վկայագիրը, որը ես հանձնել էի նրանց գործունեությունը դադարեցնելու համար:

<ԴՄ-ի ապարատը հանձնել են ինձ նորից ԱԶ-ի վկայականի հետ միասին և թույլատրել են նորից սկսել իմ գործունեությունը: Ես ամեն ամիս ներկայացրել եմ հաշվետվություն, սակայն յոթ ամիս անց ինձ փոստով առաքել են թիվ 2118448 ակտը, որում նշված է, թե իբրև <ԴՄ ապարատը գրանցված չէ:

Ես Վաղարշապատի ՏՀՏ բաժին դիմում եմ գրել և մանրամասն շարադրել եմ փաստերը, սակայն պատասխանել են, որ ժամանակին դիմում չեմ ներկայացրել:

Ես իմ գործունեությունը կատարել եմ բարեխնդորեն և չեմ պատրաստվում Վաղարշապատի ՏՀՏ անփոյթ աշխատանքի համար պատասխան տամ:

Ենթակա վերոգրյալից Ա/Զ Արքենիկ Մարգարյանը խնդրում է քննարկել դիմումը և ստուգման ակտը վերացնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Զ Արքենիկ Մարգարյանի և ստուգում իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմված է ՀՀ օրենսդրության պահանջների խափստմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

<<այսատանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Քննարկվող դեպքում ստուգման ակտով արձանագրվել է Ա/Զ Արքենիկ Մարգարյանի կողմից առանց հսկիչ-դրամարկղային մեքենան Էջմիածնի ՏՀՏ-ում գրանցելու գործունեության իրականացման փաստ և որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, ստուգման

ակտում նշվել է << կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<սկիզ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> Ենթակետը:

<< կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<սկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> Ենթակետի համաձայն. <<Պատասխանատու անձը պարտավոր է <<ՀՄ-ի միջոցով տպել և գումարն (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), իսկ <<այստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարությանն օժանդակության նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող չեկ (կտրոն):>

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտում ըստ էության սխալ է նշված իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, հարկ է նախ նշել, որ քննարկվող դեպքում Արքենիկ Մարգարյանն զբաղվում է հյուրանոցային տնտեսության կազմակերպմամբ, այսինքն՝ մատուցում է ծառայություններ (այլ ոչ թե ապրանքների մանրածախ վաճառք), և երկրորդ, ստուգման ակտով արձանագրվել է ոչ թե ապրանքների վաճառքի կամ մատուցված ծառայության դիմաց կտրոն չտրամադրելու, այլ՝ առանց հսկիչ-դրամարկղային մեքենան հաշվառելու գործունեության իրականացման փաստ:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> <<օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> <<օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնուած է տնտեսավարող սուբյեկտի դեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի դեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգում մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնուած տնտեսավարող սուբյեկտի դեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 07.09.2012թ-ին, որը Ա/Ձ Արքենիկ Մարգարյանին է առաքվել փոստային ծառայության միջոցով 10.09.2012թ-ին: Որից հետո 14.09.2012թ-ին կազմվել է ստուգման ակտը:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> <<օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, այն է՝ ստուգման ակտը կազմվել է մինչև 5 աշխատանքային օրը լրանալը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> <<օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնարանման հետևանքով.>:

Եներկ քննարկման արդյունքներից և դեկավարվելով <<արկային ծառայության մասին>> <<օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողորվու

ո բ ո 2 ո ւ մ է՝

Չեղյալ համարել <<<ՀԱՅ ԴԵԿ Էջմիածին>>> 14.09.2012թ. թիվ 2118448 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՄԵՂՅԱՆ